ՀԱՅՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

This programme is funded by the European Union

TOGETHER AGAINST GENDER STEREOTYPES AND GENDER-BASED VIOLENCE

#eu4genderequality

ՀԱՅՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՓԵՏՐՎԱՐ 2021 թ.

ՀԵՂԻՆԱԿ՝ Կարին Լեպիլլեզ, Ավագ գենդերային խորհրդատու, Ներառական հասարակություններ (Inclusive Societies)
Ջորջթաունի համալսարանի ուսանող Մեյսի Ուուստալիի օժանդակությամբ

ԹՂԹԱԿԻՑՆԵՐ՝
Կլարա Ալեման՝ ծրագրերի տնօրեն, Պրոմունդո ԱՄՆ
ՉԷ Նեմբհարդ՝ ծրագրի ղեկավարի տեղակալ, Պրումոնդո ԱՄՆ

ԳՐԱԽՈՍՆԵՐ՝
Նուրգուլ Կինդերբաևա՝ Գենդերային ծրագրի մասնագետ, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադարամի (ՄԱԲՀ) ԱԵԿԱ տարածաշրջանային գրասենյակ
Նարգիզ Ազիզովա՝ Ծրագրի մասնագետ ՄԱԿ-ի Կանայք ԵԿԱ տարածաշրջանային գրասենյակ
Օլգա Օսաուլենկո՝ «ԵՄ-ն հանուն տղամարդկանց և կանանց իրավահավասարության» (EU4GE) համատեղ ծրագրի ղեկավար, ՄԱԿ Կանայք/ ՄԱԲՀ
Նարինե Բեգլարյան՝ Ծրագրի համակարգող, ՄԱԲՀ Հայաստան
Խալիսա Շահվերդիևա՝ Ծրագրի համակարգող, ՄԱԲՀ Ադրբեջան
Օլգա Լուկաշովա՝ Գենդերային ծրագրի վերլուծաբան, ՄԱԲՀ Բելառուս
Մարիկա Կուրդաձե՝ Ծրագրի պատասխանատու, ՄԱԲՀ Վրաստան
Վիոլետա Տերգուտա՝ Ծրագրի համակարգող, ՄԱԲՀ Մոլդովա
Նատալյա Կոշովսկա, Ծրագրի վերլուծաբան, Գենդերային հավասարության և կանանց հզորացում, ՄԱԲՀ Ուկրաինա
Վալերիա Տարան-Գաիդուկ՝ Ծրագրի համակարգող, ՄԱԲՀ Ուկրաինա

Սույն հրապարակումն իրականացվել է Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող և «ՄԱԿ Կանայք»-ի ու ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից համատեղ իրականացվող «ԵՄ-ն հանուն կանանց ու տղամարդկանց իրավահավասարության. Միասին ընդդեմ գենդերային կարծրատիպերի և բռնության» ծրագրի շրջանակներում:

Հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն են կրում «ՄԱԿ Կանայք»-ը և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամը, և պարտադիր չէ, որ այն արտացոլի Եվրոպական միության տեսակետները:

Փետրվար 2021

Բոլոր լուսանկարները՝ Shutterstock

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 4

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

ՀԱՄԱՏԵՔՍՏԸ 6

ԼԱՎ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ 7

ՀԱՋՈՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 7

ՀԱՋՈՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ 9

ԻՆՉՊԵՍ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ 12

ՀԱՋՈՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՌՈՏԱԳՐԵՐ 15

ՀԱՅՐՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ(ՄՄԿՀ) 15

«ԾՐԱԳԻՐ Պ»(«ՊՐՈՄՈՒՆԴՈ») 18

ԻՍԿԱԿԱՆ ՀԱՅՐԵՐ(«ՍԵՅՎ ԴԸ ՉԻԼԴՐԵՆ») 22

ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՎԵԼՅԱԼ ՀԱՄԱՌՈՏԱԳՐԵՐ 25

ԻՍԿԱԿԱՆ ՀԱՅՐԵՐ 25

ՀԱՅՐԵՐԻ ԴՊՐՈՑ (ՀՆԿ) 28

ՄԻԵՍՍԱԿԻՏ 29

ՄԻՆՍԿԻ ՇՐՋԱՆԻ ՆՈՐ ՀԱՅՐԵՐԻ ԴՊՐՈՑ 30

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՈՒՂԻ 31

ՌԵՖՈՐՄ 32

ՄԻՇՏ ՀԱՅՐԻԿ 33

ՄԱԿ-ի ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅՐԻԿՆԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐ 35

ԴԵՊՔԵՐԻ ՆԿԱՐԱԳՐԵՐ 36

ԴԵՊՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ. ՀԱՅՐԵՐԻ ՇԱՐԺԱԿԱՆ ԴՊՐՈՑ 36

ԴԵՊՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ. ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ՀԱՅՐՈՒԹՅՈՒՆ 37

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՄՄԿՀ	Մոր և մանկան կրթական հիմնադրամ
ՀՆԿ	Հանրային նախաձեռնությունների կենտրոն
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ԱԵԿԱ	Արևելյան Եվրոպա և Կենտրոնական Ասիա
ԱԵԿԱՏԳ	ԱԵԿԱ տարածաշրջանային գրասենյակ
ԵՄ	Եվրոպական միություն
ՀԱԾ	Հայրերի աջակցման ծրագիր
ՍՊԲ	Սեռով պայմանավորված բռնություն
ՁԿԲ	Ձուգընկերոջ կողմից բռնություն
ՄԱԳ	Մոնիտորինգ և գնահատում
ՄՆԵԱ	Մայրական, նորածնային և մինչև 5 տարեկան երեխաների առողջություն
ՇՄՁՀԳ	Շվեդական միջազգային զարգացման և համագործակցության գործակալություն
ՍՎԱ	Սեռական և վերարտադրողական առողջություն
ՄԱԲՀ	ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ
ՅՈՒՆԻՍԵՖ	ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ
ՄԱԿ ԿԱՆԱՅՔ	ՄԱԿ-ի Գենդերային հավասարության և կանանց հզորացման կառույց
ԱՀԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայրիկների դպրոցներն ու հայրերի աջակցման կենտրոնները ողջ աշխարհում ի հայտ եկան այն պահից, երբ ճանաչվեց, որ հղիությունից ի վեր հայրերի դերակատարումը ոչ միայն էապես կարևոր է իրենց զուգընկերների և երեխաների առողջության ու բարեկեցության ապահովման տեսանկյունից, այլ նաև ակտիվ ներգրավմամբ հայրությունը չափազանց շահեկան է հենց տղամարդկանց համար: Հետազոտությունները ցույց են տալիս, որ երբ հայրերն ակտիվորեն ներգրավված են իրենց երեխաների կյանքում, ավելի հավանական է, որ նրանց երեխաներն ունենան ավելի լավ մտավոր և ֆիզիկական առողջություն, ավելի լավ առաջադիմություն, ունենան ավելի շատ ճանաչողական և սոցիալական հմտություններ, ավելի բարձր ինքնագնահատական, սթրեսակայություն և վարքագծային ավելի քիչ խնդիրներ[1]: Հայրերը, որոնք ժամանակ են հատկացնում ակտիվ ծնող լինելու համար, ավելի երկար են ապրում, քիչ հավական է նրանց կողմից թմրամիջոցների չարաշահումը, աշխատանքում ավելի արդյունավետ են, ընդհանուր առմամբ ունեն ավելի քիչ մտավոր և ֆիզիկական դժվարություններ և ավելի երջանիկ են, քան այն հայրերը, որոնք սերտորեն կապված չեն իրենց երեխաների հետ:[2]

Սույն ժողովածուն ծառայելու է որպես տեղեկատվական հիմք տարբեր երկրներում ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի գրասենյակների և Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայում (ԱԵԿԱ) գործող գործընկերների համար, քանի որ վերջիններս մշակում և ընդլայնում են հայրության այն ծրագրերը, որոնք մարտահրավեր են նետում գենդերային սահմանափակումներին և խրախուսում տղամարդկանց ավելի մեծ դերակատարում ունենալ խնամքի և տնային տնտեսության կառավարման հարցերում:

Լավ գործելակերպ նկարագրող հաջողված ծրագրերի համառոտագրերը ներկայացնում են Հայրիկների դպրոցների մի շարք ծրագրեր, որոնք կիրառվում են ողջ աշխարհում: «Հաջողված ծրագրերի համառոտագրեր» բաժինը ներկայացնում է Հայրիկների դպրոցի ծրագրերը, որոնք ամենայն լրջությամբ գնահատվել են, և հստակ է, որ դրական արդյունքների են հասել ծրագրի վերջնանպատակներից առնվազն մեկի մասով, այդ թվում՝ ծնողական հմտությունների, խնամքի միջոցառումներում հոր ներգրավվածության, հոր և երեխայի միջև փոխազդեցության և բռնության նվազեցման թեմատիկ ուղղություններով (այսինքն՝ մոր նկատմամբ զուգընկերոջ կողմից բռնություն կամ չափազանց խստապահանջություն երեխայի նկատմամբ): Հավելյալ համառոտագրերը ավելացվել են՝ ցույց տալու Հայրիկների դպրոցի այն ծրագրերը, որոնց հաջողությունը փաստող սակավ հանրային տվյալներ կան, սակայն որոնք ընթերցելով՝ կարելի է որոշակի եզրակացություններ անել դրանց հաջողության ու կայունության մասին: Հավելյալ համառոտագրերը օրինակ ու օգտագործման ենթակա նյութեր են և նպատակ ունեն ցույց տալու հայրության վերաբերյալ նյութերի առկա բազմազանությունը մասնավորապես Արևմտյան և Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայի երկրներում:

1. Allen, S. and Daly, K. (2007). The Effects of Father Involvement: An Updated Research Summary of the Evidence. Guelph, Canada: Centre for Families, Work & Well-Being, University of Guelph. and Barker, G. (Ed.). (2003). Men's Participation as Fathers in the Latin American and Caribbean Re- gion: A Critical Literature Review with Policy Considerations. Washington, DC: The World Bank. and Nock, S. and Einolf, C.j. (2008). The One Hundred Billion Dollar Man: The Annual Costs of father absence. National Fatherhood Initiative.

2. DeGarmo, D.S., et al. “Patterns and Predictors of Growth in Divorced Fathers' Health Status and Substance Use”. American Journal of Men's Health. 2010; 4(1): pp. 60–70. and Schindler, H.S. “The Importance of Parenting Contributions in Promoting Fathers' Psychological Health”. Journal of Marriage and Family. 2010; 72(2): pp. 318-332. and Eisenberg, M.L., et al. “Fatherhood and the Risk of Cardiovascular Mortality in the NIH-AARP Diet and Health Study”. Human Reproduction. 2011; 26(12): pp. 3479-85.

ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

Այս ժողովածուն մշակվել է «ԵՄ-ն հանուն կանանց և տղամարդկանց իրավահավասարության. Միասին ընդդեմ գենդերային կարծրատիպերի և բռնության» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորում է Եվրոպական միության կողմից ու Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում համատեղ իրականացվում ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և «ՄԱԿ-ի Կանայք» կազմակերպության կողմից: Ծրագիրը նպատակ ունի՝

1. փոխել կանանց իրավունքները սահմանափակող գենդերային կարծրատիպերի և հայրիշխանական նորմերի վերաբերյալ հանրության ընկալումները.

2. ընդլայնել երեխաների խնամքում և հայրերին ուղղված ծրագրերում տղամարդկանց ներգրավումը.

3. ընդլայնել սոցիալական աշխատողների (միջնորդների) և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գիտելիքները և գործիքակազմը բռնության կանխարգելմանն ուղղված ապացուցահեն ծրագրեր իրականացնելու համար՝ թիրախավորելով ընտանեկան բռնություն գործող անձանց:

ԼԱՎ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

Այս ժողովածուի մեջ տեղ գտած Հայրիկների դպրոցի ծրագրերը ներառում են լավ գործելակերպի մեկ կամ մի քանի տարրեր՝ կառավարչական կամ տեխնիկական: Այս տեղեկությունը հիմնվում է ծրագրի գնահատումների, հետազոտողների կամ ծրագրի իրականացման կամ գնահատման համար պատասխանատու մասնագետների հետ հարցազրույցների, ուսումնական ծրագրի բովանդակության, մեթոդաբանության նրանց վերլուծության և ցանկացած այլ փաստաթղթերի վրա, որոնք նկարագրում են հիմնական մշակման և իրականացման այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են վարողների մասնագիտական հատկանիշները, ուսուցումն ու օժանդակումը, հավաքագրման ռազմավարությունը: Կառավարչական լավ գործելակերպը ցույց է տալիս ծրագրի հաջող կառավարման գործոնները, իսկ տեխնիկական լավ գործելակերպը վերաբերում է օգտակար տեխնիկական բովանդակությանն ու շրջանակին կամ տեսական մոտեցումներին:

ՁԵՎԱՉԱՓՆ ՈՒ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Քննադատական մտորում, նոր վերաբերմունքի և վարքագծերի ընկալման, բարենպաստ միջավայրում դրանց կիրառման և այնուհետև որդեգրման համար անհրաժեշտ է, որ մասնակիցները խնդրի հետ առնչվեն բովանդակային առումով և հնարավորություն ունենան կիրառել դրանք միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում: Այն դեպքում, երբ չկա հանդիպումների հստակ սահմանված քանակ կամ «չափաբաժին», ցանկալի է նախատեսել շաբաթական երկժամյա խմբային հանդիպումներ կամ դրանք համատեղել տնային այցելությունների հետ 3-5 ամիս շարունակ:

ՎԱՐՈՂՆԵՐ, ՈՉ ԹԵ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

Մինչ ուսուցիչներից ակնկալվում է ստանալ բոլոր հարցերի պատասխանները, վարողի ուշադրության կենտրոնում մասնակիցների շրջանում երկխոսության և քննադատական մտորման ապահովումն է: Գենդերային փոխակերպման մոտեցում որդեգրած Հայրիկների դպրոցներն ապավինում են քննարկումների վարման հենց այս ձևին. ոչ թե ուսուցանել, այլ հայրերի համար ստեղծել բաց և բարենպաստ միջավայր իրենց կյանքի շուրջ մտորելու, կիսվելու և մեկը մյուսից սովորելու համար:

ՀԱՎԱՔԱԳՐԵԼ ԱՊԱԳԱ ԵՎ ՆՈՐԱԹՈՒԽ ՀԱՅՐԵՐԻ

Հղիության և հայրության առաջին օրերի ընթացքում, երեխայի ծնունդով պայմանավորված, առկա են այնպիսի հնարավորություններ, որոնց դեպքում առավել հեշտ են ընկալվում կյանքի փոփոխությունների հետ գործ ունենալու համար անհրաժեշտ ուղղորդման, գիտելիքի ու հմտությունների շրջանակը: Հենց այս պատճառով էլ այդ ժամանակահատվածն ամենաարդյունավետն է Հայրիկների դպրոցի համար հայրերի հավաքագրման առումով: Միաժամանակ գործ ունենք նաև այն ժամանակահատվածի հետ, երբ ավելի հավանական է, որ տեղի ունենան վերաբերմունքի և վարքագծի փոփոխություններ:

ՀԱՐՄԱՐ ՎԱՅՐ ԸՆՏՐԵՔ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ընտրեք այնպիսի վայր, որ հարմար ու հասանելի լինի տարբեր հենք ունեցող հայրերի համար՝ հաշվի առնելով հասանելիության սահմանափակումները, օրինակ՝ տրանսպորտի ծախսերը և տեղանքին անծանոթ լինելը: Տնտեսական և հարմարության գործոնները կարող են ազդել հայրերի մասնակցության վրա: Շատ երկրներում Հայրիկների դպրոցները գտնվում են առողջապահական հաստատությունների ներսում, որտեղ հայրերն արդեն կարող են իրականացնել նախածննդյան այցելություններ և մասնացնել ծնողական դասընթացներին:

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԸՆՏՐԵՔ ՀԱՐՄԱՐ ԺԱՄԱՆԱԿ

Հայրիկների դպրոցների հանդիպումների համար պետք է դիտարկել օրվա այնպիսի ժամ, որը կխրախուսի կանոնավոր մասնակցությունը: Կարելի է հանդիպումներն անցկացնել ճաշի կամ երեկոյան ժամերին՝ հարմարեցնելով հայրերի աշխատանքային ժամանակացույցին: Ենթադրություններ մի արեք, թե երբ կարող են հայրերն ազատ լինել, այլ պատրաստ եղեք հարմարեցնելու ժամանակը յուրաքանչյուր խմբի կարիքներին: Հայրիկների դպրոցներից մեկում առաջարկվում էր ուսումնական ծրագրի երկու տարբերակ՝ մեկը՝ գիշերը, մյուսը՝ առավոտյան՝ հայրերին ընտրության հնարավորություն տալու համար:

ՀԱՎԱՔԱԳՐԵԼ՝ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԾԱՆՈԹ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՎԱՅՐԵՐ

Կախված թիրախ հայրերի հենքից կամ ինքնությունից՝ հավաքագրման արդյունավետ ուղիները կարող են մեծապես տարբերվել: Հաղորդակցման բազմաթիվ միջոցների օգտագործումը կմեծացնի նախատեսված լսարանին հասնելու հավանականությունը: Մեթոդները կարող են ներառել պաստառներ առողջապահական հաստատություններում և ծննդատներում, հրապարակումներ սոցիալական մեդիայի հարթակներում, ռադիոհաղորդումներ, կրոնական և մշակութային հաստատություններում բանավոր տեղեկացում: Ապագա և նորաթուխ հայրերին բացահայտելու միջոց են նաև առողջապահական կենտրոնները:

ԽՄԲԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ [3]

Խմբային ուսուցման ձևաչափերը կարող են մասնակիցների համար օգտակար լինել մի քանի առումներով, քանի որ դրանք ոչ միայն թույլ են տալիս ապահովել միջանձնային/ դիտարկման միջոցով ուսուցում, այլ նաև հարուցում են սոցիալական աջակցություն և նպաստում, որ ծնողները առավել լավ ընկալեն սեփական անձի արդյունավետության աստիճանը՝ հենց որպես ծնող, ինչն էլ, իր հերթին, նպաստում է ավելի առողջ վարքագծի որդեգրմանը: Խմբային ուսուցումը կարող է նվազեցնել ծնող դառնալու հետ կապված անհանգստությունը, քանի որ մասնակիցները գիտակցում են, որ այլք նույնպես բախվում են նույն մարտահրավերներին: Ուսուցման այս ձևաչափը թույլ է տալիս միասին աշխատել ընդհանուր խնդիրների շուրջ և միասին ծնողական ընդհանուր խնդիրների լուծումներ գտնել:

---

3. VDigolo, L., et al. (2019). Evidence Review: Parenting and Caregiver Support Programmes to Prevent and Respond to Violence in the Home.

ՀԱՋՈՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԿԻՐԱՌԵԼ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ

Ուսումնական ողջ ծրագրի ընթացքում գենդերային փոխակերպման մոտեցման կիրառումը կարևոր է գենդերային անառողջ և բացասական նորմերի և կարծրատիպերի փոփոխման համար, որոնք խանգարում են տղամարդկանց լինել ներգրավված ծնող և զուգընկերոջ նկատմամբ ցուցաբերել հարգալից և արդարացի վերաբերմունք: Գենդերային փոխակերպման աշխատանքը ձգտում է փոխել տղամարդկանց, կանանց և ոչ բինարային անձանց միջև ուժերի անհավասար հարաբերակցությունը: Հայրիկների դպրոցի ուսումնական ծրագրում այս մոտեցումը կարող է արտահայտվել զույգի հարաբերություններում գենդերային հավասարության խթանմամբ, կանանց և տղամարդկանց միջև խնամքի միջոցառումների և տնային հոգսերի արդարացի բաշխմամբ, երեխաներին պատժելու փոխարեն դրական կարգապահության խրախուսմամբ, կանանց և երեխաների նկատմամբ բռնության կանխարգելմամբ և ծնողների հետ երեխաների հարաբերություններում գենդերային հավասարության մոդելի ձևավորմամբ:

ՊԱՐԶ ՈՒ ՀՍՏԱԿ ՈՒՂԵՐՁՆԵՐ՝ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՅՐԱԿԱՆ ԶԳՏՈՒՄՆԵՐԸ ԱՐԹՆԱՑՆԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Գենդերային փոխակերպման այն ծրագրերը, որոնք տղամարդկանց դիտում են որպես կանանց և երեխաների առողջության պահպանման գործիքի՝ առանց հաշվի առնելու նրանց փորձը և կարիքները, տղամարդկանց հավաքագրելիս և հայրերի խմբերում պահելիս կարող են դժվարությունների հանդիպել: Տղամարդկանց օգուտները խնամքի հարցերում նրանց ընդլայնվող մասնակցությունից բազմաթիվ են, ներառյալ մտավոր, ֆիզիկական և սեռական առողջության բարելավումները[4]: Հավաքագրման ուղերձներում կարելի է հստակ ձևակերպել այս առավելությունները և դիմել տղամարդկանց՝ որպես հայր ձգտումներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼ ՏԵՂԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԻՆ

Թեպետ հիմնական հասկացությունները և գործողությունները չեն փոփոխվում, սակայն Հայրիկների դպրոցի ուսումնական ծրագիրը պետք է ուսումնասիրվի և վերանայվի տեղի շահագրգիռ թիմի կողմից, որը կներառի հասարակության տարբեր շերտեր ներկայացնող հայրերի՝ տվյալ համայնքում հայրերի իրադրությանն ու կարիքներին համապատասխանաբար արձագանքելու նպատակով: Սա կարող է նշանակել առանձին խնդիրների լուծում, օրինակ՝ հետծննդաբերական դեպրեսիա տղամարդկանց մոտ, կամ միգրանտ հայրերի կամ զինվորական հայրերի հատուկ կարիքների բավարարում: Համոզվեք, որ բավականաչափ ժամանակ եք հատկացրել ֆորմատիվ (ծրագրի ձևավորման) հետազոտությունների և համատեքստային հարմարեցման համար:

ԶԵՎԱՎՈՐԵԼ ՎԱՐՔԱԳԾԱՅԻՆ ԵՎ ՓՈԽԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագիրը մշակվել է սոցիալական ուսումնառության տեսության հիման վրա:

4. Van der Gaag, N., Heilman, B., Gupta, T., Nembhard, C., & Barker, G. (2019). State of the World's Fathers: Unlocking the Power of Men's Care. Washington, DC: Promundo-US.

Հանդիպումները ներառում են մասնակիցների կողմից իրենց փորձի և մտահոգությունների փոխանակում, գործնական աշխատանքներ և փոխգործակցային վարժություններ (բաց պատմություններ, դերային խաղեր, նկարներ) և տնային աշխատանքներ՝ հարցերի շուրջ մտորելու և տանը գործնականում կիրառելու նպատակով:

ԳԵՆԴԵՐԻ ԵՎ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐՄՈՒԾԵԼ ԱՍՏԻՃԱՆԱԲԱՐ

Գենդերի և իշխանության դինամիկայի վերաբերյալ զրույցները մասնակիցների համար կարող են հուզական առումով բարդ և վիճելի լինել: Անհրաժեշտ է խմբի ներսում կառուցել վստահության վրա հիմնված հարաբերություններ և վարել հանդիպումներն այնպիսի հմտությամբ, որ զրույցի համար բարենպաստ միջավայր ստեղծվի: Անհրաժեշտ է սկսել այն թեմաներից, որոնց հայերը կարող են առնչվել իրենց կյանքում առանց դրանց քննադատորեն անդրադառնալու, ինչպես օրինակ՝ զրուցել հարաբերությունների և կանանց ու տղամարդկանց կյանքի մասին: Այսպես ավելի արդյունավետ կլինի:

ՁԱՐԳԱՑՆԵԼ ԱՌՈՂՋ ԵՎ ԴՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ[5]

Ծրագրերը, որոնք ուղղված են ծնողների և երեխաների, ինչպես նաև զուգընկերների միջև դրական հաղորդակցման ամրապնդմանը, արդյունավետ կերպով կանխում են ընտանեկան բռնությունը՝ ստեղծելով ընդհանուր պաշտպանական գործոններ միաժամանակ թե՛ ընտանիքում զուգընկերոջ կողմից բռնությունը, թե՛ երեխաների նկատմամբ բռնությունը նվազեցնելու համար:

ՁԱՐԳԱՑՆԵԼ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՎԱՐՔԸ ԴՐԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ՈՉ ԲՌՆԻ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐՈՎ ԿԱՌԱՎԱՐԵԼՈՒ՝ ԾՆՈՂԻ ԿԱՄ ԽՆԱՄՈՂԻ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[6]

Դրական կարգապահության վերաբերյալ բովանդակություն ներառող ծրագրերը սովորաբար ներառում են նաև ծնողների համար նախատեսված մանկավարժական նյութեր, որոնք օգնում են ծնողներին ավելի լավ հասկանալ, թե, զարգացման փուլից կախված, ինչպիսի վարքագիծ ունեն երեխաները, ունենալ ավելի իրատեսական ակնկալիքներ և ձեռնպահ մնալ վատ վարքագծին բռնի կարգապահական մեթոդներով արձանագանքելուց:

ՆԱԽԱՏԵՍԵԼ ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հայրիկների դպրոցի հանդիպումների միջակայքում տնային աշխատանքների միջոցով հայրերի ներգրավումը կարող է հանգեցնել գործնական և մտքեր առաջ բերող քննարկումների և բարձրացնել մասնակցության մակարդակը: Տնային աշխատանքները, ինչպիսիք են շնչառական հնարքների կիրառումը կամ զուգընկերոջ հետ իրենց սեփական հոր հետ հարաբերությունների մասին զրույցները, կարող են օգնել ծրագրի ուղերձների և հայրերի կյանքի միջև կապերի ստեղծմանը և վարքագծային դրական փոփոխությունների խթանմանը:

5. Digolo, L., et al. (2019). *Evidence Review: Parenting and Caregiver Support Programmes to Prevent and Respond to Violence in the Home* p.12

6. Digolo, L., et al. (2019). *Evidence Review: Parenting and Caregiver Support Programmes to Prevent and Respond to Violence in the Home* p.12

ՆԱԽԱՏԵՍԵԼ «ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՐ»

Ընտանեկան օրերը հայրերի և նրանց զուգընկերների համար հնարավորություն են՝ հանդիպումներին մասնակցելու որպես զույգ կամ ընտանիք: Դրանք ստեղծում են միջավայր միասին լինելու համար և նպաստում հայրերի կողմից Հայրիկների դպրոցում քննարկված դրական վարքագծի գործնական կիրառմանը: Միջոցառումները կարող են ուղղված լինել ընտանիքի ներսում հաղորդակցման և պլանավորման հմտությունները զարգացնելուն, օրինակ՝ ընտանեկան բյուջեի կազմում կամ ապագայի վերաբերյալ զրույցներ:

ԻՆՉՊԵՍ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Հաջողված ծրագրերի համառոտագրերը նկարագրում են ողջ աշխարհում ներդրված Հայրիկների դպրոցների հաջողված փորձերը: Վերջիններս ընտրվել են՝ հիմք ընդունելով, որ այդ ծրագրերում դրական արդյունքներ են արձանագրվում ծնողական հմտությունների զարգացման մեկ կամ ավելի ուղղություններով, խնամքի միջոցառումներում հայրերի ներգրավվածության, ծնող-երեխա փոխհարաբերությունների, հարաբերությունների որակի և բռնության նվազեցման առումներով: Որպես «հաջողված» որակված բոլոր ծրագրերը խիստ գնահատման են ենթարկվել, որոնց մասնամասները ներկայացված են բոլոր համառոտագրերում ներառված հղումներում: Լավ գործելակերպի յուրաքանչյուր ծրագրի համառոտագիր ունի հետևյալ բաժինները.

Վայր. ցույց է տալիս ծրագրի իրականացման վայրը:

ՀԱՄԱՏԵՔՍՏ

Ծրագրի վերաբերյալ կարճ ակնարկ, որը ներառում է տեղեկություններ ծրագրի մեկնարկի, ներգրավված կազմակերպությունների և նպատակների մասին:

ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ

Մանրամասններ է ներկայացնում վարողների հավաքագրման, ուսուցման և առաջնային կարևորության անհրաժեշտ տվյալների և փորձի վերաբերյալ: Մանրամասնում է նաև հայրերի հավաքագրման գործողությունները, և թե որ տղամարդիկ են միջամտության թիրախը, հանդիպումների անցկացման վայրի, ժամկետների ու տևողության հետ կապված հարցերը: Հնարավորության դեպքում տեղեկատվություն է տրամադրվում դասընթացների շրջանակներում քննարկվելիք թեմաների վերաբերյալ:

ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

Առկայության դեպքում ներկայացվում են հրապարակված և հանրայնացված ուսուցողական նյութերի հղումներ:

ՓԱՍՏԵՐ

Ամփոփում է վերջերս իրականացված՝ ծրագրերի գնահատման հիմնական եզրակացությունները:

ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ

Առկայության դեպքում, ներկայացվում են հրապարակված և հանրայնացված գնահատումների հղումները: Ներառվում են թե՛ քանակական, թե՛ որակական գնահատումները:

ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

Մանրամասներ է ներկայացնում ծրագրի գնահատմամբ վերհանված մարտահրավերները:

ՔԱՂՎԱԾ ԴԱՍԵՐ

Մանրամասնում է ծրագրի իրականացման ժամանակ քաղված դասերը, որոնք տեղ են գտել ծրագրի գնահատման զեկույցներում:

Հիշեցման կարգով նշենք, որ կարճատև ծրագրերի համառոտագրերը, որոնց մասին առկա է սակավ հանրային տվյալներ, ներառվել են Հայրիկների դպրոցի ծրագրերում, որպեսզի որոշվի, թե որքանով հաջող ու կայուն էին դրանք: Համառոտագրերն ամբողջ աշխարհում, մասնավորապես Արևմտյան և Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներում իրականացված ծրագրերի ամփոփ պատկերն են: Յուրաքանչյուր համառոտագիր ներառում է տեղեկություններ վայրի, համատեքստի, միջամտության և հետևյալ տարրի մասին.

ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Տրամադրվում են մանրամասներ, թե ում կողմից և ինչպես են մշտադիտարկվել ծրագրի աշխատանքները, և առկայության դեպքում տրամադրվում են տեղեկություններ ծրագրի գնահատման վերաբերյալ:

ՀԱՋՈՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՌՈՏԱԳՐԵՐ

ՀԱՅՐԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ (ՄՄԿՀ)

Վայրը՝ Թուրքիա

ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

Մոր և մանկան կրթական հիմնադրամը (AÇEV) 1990-ականների վերջին ստեղծեց Հայրերի աջակցության ծրագիրը (ՀԱԾ), երբ պարզ դարձավ, որ հայրերը կարող են օգտվել նույն տեսակի ծնողական գիտելիքներից և աջակցությունից, որը տրամադրվում է կանանց հիմնադրամի մայրության աջակցության ծրագրի շրջանակներում: Հայրիկների վերապատրաստման դասընթացները փորձարկվեցին Ստամբուլում և Կոջաելիում, այնուհետև ընդլայնվեցին՝ բոլոր սոցիալ-տնտեսական խմբերի հայրերին հասանելի լինելու համար: ՄՄԿՀ-ն շարունակում է ՀԱԾ-ներ իրականացնել, և 1996 թ -ից ի վեր ծրագրից օգտվել են ավելի քան 60000 հայրեր Թուրքիայի 55 քաղաքներից: ՀԱԾ-ի շրջանավարտներն ու դասընթացավարներն այժմ ստեղծում են իրենց հայրական ցանցերն ու նախաձեռնությունները և իրենց համայնքներում հանդես են գալիս գենդերային հավասարության օգտին: Ի թիվս ծրագրի այլ նվիրատուների՝ ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ բռնության վերացման նպատակային հիմնադրամը 2019 թ -ին ֆինանսավորել է և գնահատել ՀԱԾ-ը:

ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ

Հայրիկների վերապատրաստման դասընթացները սովորաբար տեղի են ունենում շաբաթական մեկ անգամ 13 շաբաթ տևողությամբ: ՄՄԿՀ-ն վերապատրաստում է այն դասընթացավարներին, որոնք հետագայում իրականացնելու են հայրերի դպրոցի ծրագիրը: Վարողների տասնօրյա դասընթացները շեշտը դնում են փոխգործակցային ուսուցման մեթոդների և խմբային համախմբվածության ձևավորման վրա: Ծրագրի թիրախը 2-10 տարեկան երեխաներ ունեցող հայրերն են և հատկապես դպրոցների շրջանակներում հավաքագրված հայրերը: Դասընթացների մասնակից հայրերի մեծ մասը երեսնամյա են, չնայած տարիքային միջակայքը տատանվում է 20-ից 50-ի սահմաններում: Մեծ մասն աշխատում է, իսկ զուգընկերները ողջ օրը տանն ապահովում են երեխաների խնամքը: Մասնակցելու համար տղամարդիկ պետք է գրագետ լինեն:

Հայրիկների վերապատրաստման դասընթացները սովորաբար ներառում են հետևյալ թեմաները.

- Մեկնարկային հանդիպում՝ շփման հաստատում,
- Երեխայի վրա հոր դերակատարման ազդեցությունը,
- Ծնողական ոճեր,
- Երեխային ընդունելը. ակտիվ ունկնդրում,
- «Ես»-ի լեզվի օգտագործումը,

- Դրական կարգապահության մեթոդները (հանդիպում 1),
- Դրական կարգապահության մեթոդները (հանդիպում 2),
- Երեխայի զարգացման ընդհանուր նկարագրություն,
- Ճանաչողական (կոգնիտիվ) զարգացում և ընթերցանություն,
- Երեխաների սոցիալական զարգացում,
- Երեխաների հուզական զարգացում,
- Խաղի կարևորությունը,
- Վերաբերմունքների և հմտությունների կիրառում:

ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

Ուսումնական նյութերը հանրայնորեն հասանելի չեն:

ՓԱՍՏԵՐ

2019 թ,-ին ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ բռնության վերացման նպատակային հիմնադրամի կողմից իրականացված խառը մեթոդներով գնահատման համաձայն՝ ՀԱԾ-ից հետո հայրերի 43%-ն ավելի շատ պատասխանատվություն է ստանձնել երեխաների խնամքի և տնային պարտականությունների հարցում և կիրառել է ոչ բռնի հաղորդակցման մեթոդներ: Բացի դրանից, տղամարդկանց շրջանում 40%-ով նվազել էր այն կարծրատիպը, որ տղամարդը պետք է լինի ընտանիքի գլխավորը: 2009 թ Բնակչության խորհրդի դեպքի ուսումնասիրությունը, որի ընթացքում արվել էին խորքային հարցազրույցներ, պարզել է, որ վերապատրաստումից հետո մասնակիցները հպարտության զգացում են ունեցել որպես հայր հանդես գալիս և վկայել են երեխաների հետ հաղորդակցման փոփոխությունների մասին ավելի շատ են լսել նրանց, իրենց բարկությունն ավելի արդյունավետորեն են կառավարել, կիրառել են դրական կարգապահության մեթոդներ մարմնական պատժի փոխարեն և ավելի շատ ժամանակ են անցկացրել երեխաների հետ, հատկապես խաղի միջոցով: Ըստ ոչ պաշտոնական տվյալների՝ հնարավոր բարելավումներ են գրանցվել երեխաների ուսումնական առաջադիմության առումով:

ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ

- Բնակչության խորհուրդ (2009). Եվ ինչպե՞ս ես ինձ հիշելու, իմ բալիկ: Թուրքիայում հայրության վերասահմանում
- Կոչակ Ա (2004) Հայրության աջակցման ծրագրի գնահատման զեկույց
- ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ բռնության վերացման նպատակային հիմնադրամ. «Հայրերն այստեղ են գենդերային հավասարության համար» ծրագրի արտաքին գնահատման զեկույց

ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ[7]

ՄՄԿՀ-ն գենդերային և գենդերային հավասարության խնդիրները լուծելուն ուղղված իր ծրագրերում բախվեց մշակութային մարտահրավերների, քանի որ շատ մասնակիցներ գենդերային պահպանողական համոզմունքներ ունեին: Ծրագրի անձնակազմը հնարավորինս զգայուն կերպով է անդրադարձել այս թեմային՝ շեշտելով, օրինակ, որ և՛ դուստրերը, և՛ որդիներն իրենց զարգացման ընթացքում նույն աջակցության կարիքն ունեն:

7. Barker, Gary, Deniz Dogruoz, and Debbie Rogow. 2009. “And how will you remember me, my child? Redefining fatherhood in Turkey,” Quality/Calidad/Qualité no. 19. New York: Population Council.

Հղում կատարելով ընկերների հետ սրճարանում ժամանակ անցկացնելու սովորությանը՝ նշվել է, որ նույնիսկ երեխաների հետ ճաշից հետո կարճ ժամանակ անցկացնելը կարող է մեծ փոփոխության բերել, չնայած որ իրենց հայրերը երբեք նման բան չեն արել իրենց հետ: Անդրադարձ է կատարվել նաև ամուսնու և կնոջ հարաբերություններին՝ այն սահմանելով որպես որպես տնային այնպիսի միջավայրի ստեղծում, որտեղ բոլորը պետք է կարողանան արտահայտել իրենց մտքերն ու հույզերը՝ շեշտը դնելով բաց և ժողովրդավարական միջավայրի վրա:

ՔԱՂՎԱԾ ԴԱՍԵՐ [8]

Ի սկզբանե Հայրերի աջակցության ծրագրի շրջանակներում ձևավորվել էր ժողովրդավարական և թիմային աշխատանքի մշակույթ: Ծրագրի անձնակազմը համարեց, որ հայրերի շրջանում փոխադարձ հարգանք ու անկեղծ մոտեցումներ խթանելու համար իրենք պետք է նման վարքագծի օրինակ լինեն: Հիմնական այս սկզբունքները շարունակել են կիրառվել ծրագրի հետագա ընթացքում՝ անկախ բովանդակային փոփոխություններից: Ծրագրի իրականացման համար պատասխանատու թիմի ներսում ժողովրդավարական մշակույթի խթանումը ընտանիքներում նման մշակույթի ստեղծման նախապայման էր:

8. Տե՛ս ծանոթագրություն 7

ԾՐԱԳԻՐ Պ («ՊՐՈՄՈԷՆԴՈ»)

Վայրը՝ ողջ աշխարհում

ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

«Ծրագիր Պ»-ի մոտեցումները, որոնք մշակվել են «Պրոմունդոյի» կողմից բրազիլացի սոցիոլոգ Պաուլո Ֆրեյրեի ազդեցության ներքո, հայրերին առաջնորդում է «քննադատական գիտակցության» ճանապարհով՝ խրախուսելով նրանց քննադատորեն անդրադառնալ գենդերային անհավասարության իրողություններին նպաստող և դրանք ձևավորող մշակութային պայմաններին այնպես, որ այդ գործողությունները խթանեն նրանց անձնական աճը: Մոտեցումը նպատակ ունի հայրերի համար ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք նրանց թույլ կտան մարտահրավեր նետել և փոփոխել գենդերային դերերի վերաբերյալ սահմանափակող նորմերը, որոնք դժվարացնում են հոր դերում նրանց ներգրավածությունը:

Թեև ի սկզբանե «Ծրագիր Պ»-ն մշակվել և իրականացվել է Լատինական Ամերիկայի երկրներում և Ռուանդայում, այժմ ԾՆՈՂ ծրագրի (Program PARENT) միջոցով այն հարմարացվում է եվրոպական համատեքստին՝ նշանառելով Պորտուգալիան, Իտալիան, Լիտվան և Ավստրիան:

«Ծրագիր Պ»-ն ապացույցների վրա հիմնված ծրագիր է, որն ուղղված է հայրերին և մայրերին (ապագա կամ մանկահասակ երեխաներ ունեցող ծնողներին): «Ծրագիր Պ»-ն հիմնված է համակարգված խմբային ուսուցման վրա, որը ձգտում է ստեղծել բարենպաստ միջավայր ծնողներին և խնամողներին իրենց երեխաների խնամքն ապահովելու հարցում աջակցելու համար և խթանել ոչ բռնի, հոգատար և հուզական աջակցությամբ փոխազդեցությունների միջոցով վաղ ուսուցումը: Ուսումնական ծրագրի հիմքում դրական ծնողավարման[9], գենդերի և տղամարդկության տեսություններն են: Թեև սկզբնական «Ծրագիր Պ»-ն ներառում էր սեռական և վերարտադրողական առողջության մասին դասընթացներ, ամենավերջին թարմացված տարբերակները կենտրոնացած են ընտանիքում բռնությունը կանխելու նպատակով ծնողական հմտությունների և առողջ հարաբերությունների ամրապնդման վրա: Այն ներառում է մոդուլներ, որոնք նպատակ ունեն բարելավել ծնող-երեխա հարաբերությունների որակը, ծնողների արձագանքման մակարդակը, երեխաների զարգացման փուլերի իմացությունը և դրական կարգապահությունը: Դասընթացները ձգտում են ամրապնդել ծնողական կարողությունները և ամենօրյա կյանքում կիրառելու համար ապահովել ծնողական որոշակի հմտություններ՝ այդ թվում նաև դրական կարգապահության մեթոդներ: Ուսումնական ծրագիրը ներառում է նաև գենդերային հավասար դերերը և խնամքը, զույգի հաղորդակցումը և համատեղ ծնողավարումը, առողջ հարաբերությունները, հույզերի ճանաչումը և կարգավորումը, կոնֆլիկտների լուծումը և սթրեսի կառավարումը խրախուսող նյութեր:

«Ծրագիր Պ»-ն կարող է ընթանալ 10-15 շաբաթական խմբային քննարկում-հանդիպումներով: Սովորաբար 10-16 շաբաթվա ընթացքում տեղի են ունենում շաբաթական 2.5 ժամ տևողությամբ հանդիպումներ: Վարողների համար նախատեսվում է 6-10 օր վերապատրաստում՝ ուշադրությունը կենտրոնացնելով սեռի և իշխանության հիմնարար հասկացությունների, այս

9. World Health Organization. (2018). Nurturing care for early childhood development: a framework for helping children survive and thrive to transform health and human potential

հարցերի շուրջ իրենց իսկ կողմից քննադատական անդրադարձ կատարելու և ոչ թե ուսուցման, այլ հորիզոնական խմբային քննարկումներ վարելու գործնական կիրառման և փորձի ձեռքբերման վրա: Վարողներին խրախուսվում է ստեղծել բաց և բարենպաստ միջավայր ավելի շուտ երկխոսության և քննադատական անդրադարձման կայացման համար, քան փորձել ստանալ բոլոր հարցերի պատասխանները: Հանդիպումների ընթացքում իրականացվում են մասնակցային աշխատանքներ՝ այդ թվում խմբային քննարկման ենթակա տեսանյութերի դիտում, դերային խաղեր և տնային աշխատանքներ խմբի շրջանակներում քննարկված թեմաներն ամրապնդելու և փորձարկելու համար: Աշխատանքներն իրականացվում են կամ արական սեռի կամ տարասեռ զույգերով: Ծրագիրը խորհուրդ է տալիս վարողներին հավաքագրել կանանց պաշտպանության և սոցիալական առաջադեմ կազմակերպություններում, քանի որ վերջիններս արդեն ձեռք են բերել մասնակցային քննարկումների վարման փորձ և արդեն փոխակերպել են իրենց գենդերային պատկերացումները: Ծրագիրն արժևորում է տղամարդկանց կողմից իրականացվող խնամքի բազմազանությունը և ուղղված է թե՛ կենսաբանական, թե՛ ոչ կենսաբանական երեխաներ ունեցող տղամարդկանց՝ համոզված լինելով որ հայրությունն ավելին է, քան կենսաբանությունը և այն արտահայտվում է տղամարդկանց՝ երեխաների հետ խնամքի կապի որակով և խորությամբ:

«Ծրագիր Պ»-ի ուսումնական ծրագիրը սովորաբար ներառում է հետևյալ թեմաները.

- Սեռ, գենդեր և ծնողավարում,
- Հոր ազդեցությունը,
- Ընտանիքի պլանավորում,
- Հղիություն,
- Ծնունդ,
- Խնամք,
- Գենդերը խաղում,
- Կանանց նկատմամբ բռնության կանխարգելում,
- Երեխաների կարիքներն ու իրավունքները,
- Խնամքի պարտականությունների բաշխում,
- Զույգերի հաղորդակցություն,
- Դրական կարգապահություն,
- Հույզերի կառավարում:

ՁԵՌՆԱՐԿՆԵՐ [10]

- «Ծրագիր Պ»՝ ձեռնարկ տղամարդկանց հայրության, խնամքի և մոր և մանկան առողջության հարցերում ներգրավվելու մասին
- Ավելի հավասար ապագա՝ տղամարդկանց խնամքի ձեռնարկ Հնդկաստանում երեխաների ամուսնությունները կանխելու հարցում հայրերի ներգրավման մասին
- Հոգատարություն հանուն հավասարության՝ գենդերային հավասարությունը և պտղի սեռի ընտրության կանխումը խթանելու համար տղամարդկանց, կանանց և երկտասարդների հետ աշխատելու ձեռնարկ, Վորլդ Վիժն

10. Ձեռնարկները հասանելի են անգլերեն, արաբերեն պորտուգալերեն և ռուսերեն լեզուներով

ՓԱՍՏԵՐ

«Ծրագիր Պ»-ն համապատասխանեցվել և իրականացվել է աշխարհի առնվազն 18 երկրում: 2018 թ.-ին Ռուանդայում իրականացված փորձնական ծրագրից հետո պարզվել է, որ 21 ամիս հետո ծրագրին մասնակցած կանանց 33%-ն է նշել իր զուգընկերոջ կողմից ֆիզիկական բռնության ենթարկվելու մասին՝ ի տարբերություն հսկիչ խմբի[11] 57%-ի: Տղամարդիկ կանանց ուղեկցել են 2.09 ստուգայցի, մինչդեռ հսկիչ խմբում ստուգայցի ցուցանիշը 1.57 էր: Տղամարդիկ երեխաների խնամքին և տնային պարտականություններին օրական տրամադրել են 2.26 ժամ, իսկ հսկիչ խմբում՝ 1.40 ժամ: Այլ գնահատումներում տեղ գտած որակական արդյունքները ցույց են տվել, որ տղամարդիկ բարելավել են իրենց զուգընկերների և երեխաների հետ հարաբերությունները, սովորել են կառավարել բարդ հույզերը, և նվազացրել խմիչքի և թմրանյութերի չարաշահումը: Բոլորովին վերջերս Լիբանանում ներդրված «Ծրագիր Պ»-ՎՄՁ ծրագրի գնահատումը, որն իրականացվել էր հարցաթերթիկների, ֆոկուս խմբերի, մասնակիցների հետ խորքային հարցազրույցների միջոցով, արձանագրել է զգալի նվազումներ՝ 32%-ից 14%, ինչը վերաբերում է թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց շրջանում կանանց նկատմամբ բռնության արդարացմանը և հանդուրժողականությանը, կանանց և տղամարդկանց կողմից երեխաների նկատմամբ ֆիզիկական դաժան կարգապահության զգալի անկում (20-50%), տնային պարտականություններում և խնամքի միջոցառումներում տղամարդանց ակտիվ մասնակցության զգալի աճ (30-50%), ինչպես նաև զուգընկերոջ և իրենց մտահոգությունների և զգացմունքների վերաբերյալ զույգի հաղորդակցման աճ:

ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ

- «Պրոմունդո» (2018). Բանդեբերեհոյի զույգերի գենդերային փոխակերպման ծրագիր Ռուանդայում Կանանց առողջության և վերարտադրողական առողջության, բռնությունների կանխման հարցերում տղամարդկանց ներգրավվածությունը խթանելու համար
- «Պրոմունդո» (2020). «Ծրագիր Պ և ՎՄՁ» ծրագրի փորձարկում Լիբանանում՝ գնահատման արդյունքներ և քաղված դասեր :

ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ[12]

Թեպետ քաղված դասերը վերաբերում են այն համատեքստին, որին համապատասխանեցվել է ծրագիրը, բազմաթիվ իրականացնող անձինք դժվարություններ են ունեցել ծրագրում հայրերի հավաքագրման և շարունակական մասնակցության ապահովման հարցում: Հաճախ դժվար է գտնել այն ժամանակահատվածը, որի ընթացքում հայրերը հասանելի կլինեն ծրագրերին մասնակցելու համար՝ հաշվի առնելով օրվա և շաբաթվա ընթացքում նրանց աշխատանքային տարբեր ժամանակացույցները:

Հավաքագրումը նաև դժվար է, եթե ուղերձներն ընդգծում են երեխաների և կանանց օգուտները՝ առանց հստակեցնելու, թե ակտիվ ծնողավարումը որքան օգտակար է հայրերի համար և ինչպես կարող է այն բավարարել նրանց կարիքները, խնդիրները և ձգտումները: Ի վերջո, խնդիրներ կարող են ծագել տնտեսական պարտավորություններից ելնելով, որոնք կապված են մասնակիցների աշխատանքային ժամանակցույցի կամ ամենօրյա եկամուտ վաստակելու անհրաժեշտության հետ:

11. Հսկիչ խմբերն այն խմբերն են, որոնք գործում են Հայրիկների դպրոցի վերապատրաստում անցած հայրերի խմբին զուգահեռ՝ որպես համեմատություն: Հսկիչ խմբերում այն հայրերն են, որոնք նման վերապատրաստում չեն անցնել:

ՔԱՂՎԱԾ ԴԱՍԵՐ[13]

Լիբանանում դասընթացներն իրականացվել են երեկոյան՝ աշխատանքային ժամերից հետո, երբ տղամարդիկ ավելի ազատ էին: Սա լրացուցիչ ծանրաբեռնվածություն է առաջացրել ծրագրի անձնակազմի համար, սակայն բավարարել է մասնակիցներին: Պարզվել է, որ հավաքագրումն ավելի բարդ է եղել քաղաքային բնակավայր Բեյրութում, քան գյուղական միջավայրում, որտեղ տղամարդիկ օրվա ընթացքում ավելի ճկուն աշխատանքային ժամեր ունեին: Ի վերջո անձնակազմն ավելի մեծ թվով մասնակիցներ է հավաքագրել երկրի հարավային գյուղական հատվածներում՝ ծրագրի իրականացման թիրախներին հասնելու համար: Ծրագիրը հարավում իրականացնելու ընթացքում «Պրոմունդոյի» անձնակազմը նկատել է, որ տղամարդիկ ավելի հաճախ էին միանում դասընթացներին և շարունակում հաճախել, երբ շեշտադրվում էին լավ հայր լինելու ձգտումները և ակտիվ խնամքից բխող նպաստավոր երևույթները՝ ֆիզիկական, մտավոր, սեռական առողջության բարելավումները ներառյալ: Քաղաքային, գյուղական և ցածր եկամուտ ունեցող շատ համայնքներում տրանսպորտային փոխադրման ծախսերի փոխհատուցումը նվազեցրել է այն խոչընդոտներից մեկը, որոնց հաճախ հանդիպում են մասնակիցները, և թույլ տվել վերջիններին շարունակել մասնակցել ծրագրին: Ծրագրի անձնակազմը պարզել է նաև, որ որոշ համայնքներում և մշակույթներում հայրերից ցածր ակնալիքները ծրագրում նրանց մասնակցությունը չեն քաջալերում, քանի որ նրանք կարծում են, թե արդեն բավարարել են «լավ» հայրերի մշակութային ակնկալիքները: Սա բարելավումը խոչընդոտող հանգամանք էր: Խնդիրը լուծելու համար ծրագրի անձնակազմը նախատեսեց սոցիալական և վարքագծային փոփոխությունների տեղեկատվական արշավ հայրության սահմանումն ընդլայնելու և հոգատար խնամողի հասկացությունը ներառելու համար (չլինել ուղղակի «մատակարար» կամ «պաշտպան»): «Լավ հայրության» սահմանման ընդլայնումը թույլ տվեց բարելավել նրանց ներգրավվածությունը և ծրագրում շարունակական մասնակցությունը՝ ի սկզբանե ընտանիքի անդամներին ընդլայնված հասկացության նկատմամբ զգայուն դարձնելու և դեպի այն հակելու միջոցով:

12. Promundo-US and Plan International Canada. (2020). Recruitment and Retention of Male Participants in Gender Transformative Programs. Washington, DC: Promundo.

13. Նույն տեղում և Promundo-US and ABAAD. (2019). The Pilot of Program P-ECD in Lebanon: Evaluation Results and Lessons Learned. Washington, DC: Promundo.

ԻՍԿԱԿԱՆ ՀԱՅՐԻԿՆԵՐԸ («Սեյվ դը չիլդրեն»)

Վայրը՝ Ուգանդա

ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

Պատասխանատու, մասնակից ու սիրող (ՊՄՍ) հայրիկների նախաձեռնությունը ստեղծվել ու փորձարկվել է «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության կողմից՝ նպատակ ունենալով նվազեցնել զուգընկերոջ կողմից կիրառվող բռնությունն ու երեխաների հանդեպ պատժի դաժան ձևերը[14], որոնք հյուսիսային Ուգանդայում պատերազմից հետո տարածված են երիտասարդ հայրերի շրջանում: Ծրագիրը փորձնական կիրառվեց 2013-ին Ուգանդայի Ամուրու շրջանի Աթիակ ենթաշրջանում, որից հետո ընդլայնվեց Հյուսիսային Ուգանդայի ողջ տարածքում ու Քարամոջա շրջանում, իսկ ապա ադապտացվեց՝ Մալավիում կիրառման նպատակով: Այս ծրագիրը շարունակում է օգտագործվել Աֆրիկայում «Սեյվ դը չիլդրենի» ծրագրերում:

ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ

«ՊՄՍ Հայրիկներ» առաջին ծրագրում որպես մասնակից ընտրվեցին 16-ից 25 տարեկան երիտասարդ հայրերը, որոնց երեխաները մեկից երեք տարեկան էին: Երիտասարդ հայրերն իրենց հերթին համայնքից ընտրեցին վստահելի տարեց մարդկանց՝ որպես իրենց մենթորներ: Յուրաքանչյուր մենթորի կցվեց չորս հայր: Յուրաքանչյուր մենթոր վեց ամիս շարունակ կատարեց վեց տունայց և հանդիպում զույգերի հետ, ինչպես նաև վեց խմբային հանդիպում անցկացրեց հայրիկների հետ: 44 մենթորներ (վարողներ) ընտրվեցին ու մասնակցեցին հնգօրյա վերապատրաստման, որն անդրադառնում էր գենդերային հավասարության, ծնողավարման ու հարաբերությունների հիմնարար հասկացություններին, ինչպես նաև զույգերի հետ տունայցի ու խմբային հանդիպումների ժամանակ կիրառելի պրակտիկ հմտություններին: Հայրիկներին աջակցող հանդիպումների ժամանակ օգտագործվում էր պաստառների շարք, որը հուզականորեն պատկերում էր հայրիկներին համայնքում և տալիս այնպիսի ուղերձներ, որոնք ստիպում են մտորել անհավասարությունը մեծացնող գենդերային նորմերի ու ընտանեկան բռնության մասին: Որոշակի ժամանակահատվածում վեց մեծամասշտաբ պաստառներ հաջորդաբար ցուցադրվեցին համայնքի կենտրոնական վայրերում՝ նպատակ ունենալով ամրապնդել հանդիպումների ժամանակ արծարծված թեմաները: Համայնքային ամփոփումները տեղի էին ունենում յուրաքանչյուր ուսումնական ցիկլի վերջում, որպեսզի համայնքի մյուս անդամներին ներկայացվեն ծրագրի ընթացքն ու ստացված գիտելիքը, ինչպես նաև հանձն առնեն իրենց հարաբերություններում լինել հավասար ու ոչ բռնի:

Ծրագրի ընդլայնման փուլում (2016-2018 թթ.) ուսումնական ծրագիրն ադապտացվեց, որպեսզի նոր համայնքներ ներառվեն, ինչպես նաև ծրագիրը դարձավ համայնքի գործող ծրագրերի մաս՝ հավելելով դրան ընտանիքի պլանավորման խումբն ու անհատական հանդիպումները: «ՊՄՍ Հայրիկներ» ծրագիրն ինտեգրվեց «Սեյվ դը չիլդրենի» Քարամոջայի Վաղ մանկության զարգացման ու խնամքի ծրագրերում և Հյուսիսային Ուգանդայի «Երիտասարդական նախաձեռնություն հանուն աշխատանքի» և «Կայուն կենսամակարդակի ապահովում ու զարգացում» ծրագրերում:

---

14. Դաժան պատժի չափման սանդղակը ներառում է յոթ ֆիզիկական ու խոսքային վիրավորող ու ծաղրող վարքագծային մոդելներ, այդ թվում երեխային մարմնով թափ տալն ու նրա վրա բղավելը:

«ՊՄՍ Հայրիկներ» ծրագրի հանդիպումները կենտրոնանում էին հետևյալ թեմաների վրա,

- Հայրություն,
- ՊՄՍ հայրիկ լինելու համար անհրաժեշտ կարևոր կետերն ու հնարքները,
- Ընտանիքի երազանքները,
- Սիրում եմ իմ ընտանիքը,
- Հաղորդակցություն,
- Ծնողավարում:

ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

- «ՊՄՍ Հայրիկներ» ծրագրի իրականացման
- «ՊՄՍ Հայրիկներ» ծրագրի մենթորների վերապատրաստման կրթական ծրագիր
- «ՊՄՍ Հայրիկներ» ծրագրի մենթորների քննարկումների ուղեցույց
- «ՊՄՍ Հայրիկներ» ծրագրի մենթորների համար լրացուցիչ նյութեր
- «ՊՄՍ Հայրիկներ» ծրագրի համար կանանց խմբային հանդիպումներ

ՓԱՍՏԵՐ

Ծրագրի 2016 թ. գնահատումը՝ հիմնված այն հարցման տվյալների վրա, որը համեմատել էր ծրագրին մասնակցած ու չմասնակցած հայրիկներին, ցույց էր տալիս, որ խմբային ու անհատական մենթորության հանդիպումները դրական ազդեցություն են ունեցել ծնող-երեխա շփումների, դրական ծնողավարման պրակտիկայի կիրառման ու ֆիզիկական պատժի կիրառմանն առնչվող վերաբերմունքի ու գործելակերպերի վրա: Ծրագրին մասնակցած տղամարդիկ երկու անգամ ավելի շատ են հակված ժամանակ անցկացնելու իրենց երեխայի հետ խաղալով, երգելով, հաշվելով և իրերի անունները սովորելով: Նրանք ավելի հակված են նաև չհամաձայնել ֆիզիկական պատժի կիրառման հետ, երբ խոսքը նմանատիպ պնդումների մասին է «Ծնողները պետք է անկարգ երեխային դաստիրակեն՝ նրան ապտակելով կամ հարվածելով»: 2020 թ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը Ուգանդայի Քարամոջա շրջանում և Հյուսիսային Ուգանդայում այս ընդլայնված ծրագրի գնահատում արեց պատահական ընտրանքով ընտրված ու շահառու խմբերի շրջանում, այդ թվում քանակական ելակետային հետազոտություն, վերջնական հետազոտություն ու ծրագրից մեկ տարի անց ազդեցության գնահատում: Ծրագրից մեկ տարի անց արձանագրված արդյունքներից էր այն, որ Հյուսիսային Ուգանդայից ծրագրի մասնակից հայրիկները երեք անգամ ավելի, իսկ Քարամոջայից հայրիկները՝ երեքուկես անգամ ավելի հակված են ոչ բռնի վարքագիծ դրսևորելուն՝ որպես հայրիկներ: Հյուսիսային Ուգանդայից ծրագրի մասնակից հայրիկները մեկուկես անգամ ավելի, իսկ Քարամոջայից հայրիկները՝ գրեթե երեք անգամ ավելի հակված են դրական ծնողավարման գործելակերպ ցուցաբերելուն, քան ոչ մասնակից հայրիկները:

Հյուսիսային Ուգանդայի՝ ծրագրի մասնակից հայրիկներն ավելի քան երկու անգամ, իսկ Քարամոջայում՝ երեքուկես անգամ առավել հակված են շփվել իրենց երեխաների հետ, քան ծրագրին չմասնակցած հայրիկները:

Ծրագրի արդյունքում նաև արձանագրվեց զուգընկերոջ կողմից գործադրվող բռնության նվազում: Մեկ տարի անց ծրագրի մասնակից հայրիկները Հյուսիսային Ուգանդայից մոտ երեք անգամ, իսկ Քարամոջայում՝ ավելի քան երեք անգամ ավելի հակված են ձեռնպահ մնալ զուգընկերոջ հանդեպ բռնության կիրառումից, քան ծրագրին չմասնակցածները:

ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ

- ԱՄՆ ՄԶԳ (2020). Ուգանդայում «ՊՄՍ Հայրիկներ» ծրագրի ընդլայնված տարբերակի գնահատման արդյունքներ
- Քիմ Էշբըրն և այլք (2016). Հյուսիսային Ուգանդայում Երեխայի ֆիզիկական պատժի ու զուգընկերոջ հանդեպ բռնության վերաբերյալ «ՊՄՍ Հայրիկներ» ծրագրի գնահատում

ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ[15]

Ըստ ծրագրի գնահատման արդյունքների՝ մեծ մարտահրավեր է ընտանիքի համատեքստում գենդերային դերերի, պարտականությունների ու վարքագծի վերաբերյալ խորը արմատներ ունեցող պատկերացումների հետևանքով ստեղծված խնդիրները լուծել կարճաժամկետ աշխատանքների միջոցով: Առաջին փորձնական ծրագրի ավարտին, 2016թ գնահատումը պարզեց, որ ծրագրի մասնակից տղամարդիկ էականորեն չեն փոխել իրենց պատկերացումներն ու համոզմունքները ավանդական գենդերային դերերի մասին: Երևում էր, որ եթե այդ տղամարդկանց զուգընկերների ու ու համայնքում և ընտանիքում այլ ազդեցիկ անհատների հետ լրացուցիչ աշխատանք տարվեր, ապա նրանց վերաբերմունքում ու վարքագծում առավել մեծ փոփոխություններ կարձանագրվեին:

ՔԱՂՎԱԾ ԴԱՍԵՐ[16]

Երեխաների, ինչպես նաև զուգընկերների հանդեպ բռնության ձևերի վերացման վերաբերյալ նյութերի օգտագործումը դիտարկվում է որպես կարևոր ու խոստումնալից պրակտիկա: Դրանք Հայրիկների դպրոցի թեմաներում ներառելու դեպքում կարճաժամկետ ու երկարաժամկետ առումներով էական նվազում կարձանագրվի թե զուգընկերոջ հանդեպ բռնության, և թե ֆիզիկական պատժի կիրառման գործելակերպում: Երիտասարդ հայրերի հետ աշխատանքը, որը ներառում է երեխայի հանդեպ վատ վերաբերմունքի ու զուգընկերոջ հանդեպ բռնության կանխարգելման համակցումը, դիտարկվում է որպես բռնության միջսերնդային փոխանցման կանխարգելման արդյունավետ ու խոստումնալից մոտեցում:

15. Ashburn, K., Kerner, B., Ojamuge, D., & Lundgren, R. (2017). Evaluation of the responsible, engaged, and loving (REAL) fathers initiative on physical child punishment and intimate partner violence in Northern Uganda. Prevention science, 18(7), 854-864.

16. Նույն տեղում

ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՎԵԼՅԱԼ ՀԱՄԱՌՈՏԱԳՐԵՐ

ԻՍԿԱԿԱՆ ՀԱՅՐԻԿ[17]

Վայրը՝ Շվեդիա

ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

«Իսկական հայրիկ» ծրագիրը մեկնարկել է 2003 թ Ստոկհոլմի նահանգի հինգ համայնքապետարաններում՝ նպատակ ունենալով աջակցել տղամարդկանց նախապատրաստվել ակտիվ ծնողավարմանն ու նպաստել զուգընկերոջ հետ հավասարության հիմքով հարաբերություններին: Ծրագիրն իրականացրել է ABF Söderstörn Կրթական Հիմնադրամը, իսկ ֆինանսավորել Ստոկհոլմի նահանգային խորհուրդը: Ծրագիրն ընթացել է ավելի քան երեք տարի:

ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ

2003 թ. ծրագրում ընդգրկվեցին 28 վարողներ, որոնք ուսումնական ընդհանուր ծրագիր ստացան ու վերապատրաստվեցին: Վարողները վերապատրաստվեցին քննարկումների վարման տեխնիկայի վերաբերյալ, որպեսզի ավելի շատ ուղղորդող, քան դասավանդող դեր ստանձնեն: Տարեկան երկուսից երեք անգամ նրանք նաև անցան հավելյալ վերապատրաստում վարքագծային գիտության, երեխաների հանդեպ բռնության ու ֆեմինիզմի թեմաներով: Ձևավորվեցին հայրիկների մոտ 200 խմբեր, որոնցում ընդհանուր առմամբ 1000 տղամարդ մասնակից կար: Մասնակիցների մեծ մասը դեռ մեկ երեխա ուներ, իսկ նրանց ծրագրում ներգրավել էին մայրության կենտրոններում՝ զույգերի համար ծնողավարման դասընթացներին մասնակցելիս: «Իսկական հայրիկ» ծրագրի նպատակն է փոխլրացնել, և ոչ թե փոխարինել զույգերի համար նախատեսված ծնողավարման դասընթացները: Դասերը վերաբերում են երեխայի ծնունդին մեկ դասը՝ նախքան երեխայի ծնվելը, իսկ հինգ դաս՝ դրանից հետո: Դրանք անցկացվում են առողջապահական հաստատությունում:

«Իսկական հայրիկ» ծրագրի հանդիպումների թեմաներն էին

- Ծննդաբերություն,
- Նոր կյանքը,
- Ծնող լինելը,
- Ամուսնական զույգերը,
- Աշխատանք, ընտանիք և ազատ ժամանակ,
- Ընտանեկան հանդիպումներ:

17. Տեղեկությունը հասանելի է՝ www.s-larcentra.se and Jouni Varanka and Maria Forslund, eds. (2006). Possibilities and Challenges? Men's Reconciliation of Work and Family Life - Conference Report.

ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ստոկհոլմի նահանգային խորհուրդն իր կարծիքը ներկայացրեց կրթական ծրագրի մասին, և ծրագրին գենդերային հարցերով խորհրդատու կցվեց վերապատրաստման նյութերին ծանոթանալու և գենդերային հավասարության տեսանկյունից դրանք բարելավելու նպատակով, ինչպես նաև վերջինս մասնակցեց հանդիպումներին ու խմբային միջոցառումներին՝ որպես դիտորդ: Ձևավորվեց ծրագրի ղեկավարներից, չորս վարողներից, կրթական ասոցիացիայի ներկայացուցիչներից ու Ստոկհոլմի նահանգային խորհրդի անդամներից կազմված վերստուգիչ խումբ, որը տրամադրում էր ուղղորդում և ցուցումներ: Այս խմբի հանդիպումները տեղի էին ունենում տարեկան չորսից հինգ անգամ:

ՀԱՅՐԵՐԻ ԴՊՐՈՑ (ՀՆԿ)[18]

Վայրը՝ Կոսովո

ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

Կոսովոյի համար մշակված «Հայրերի դպրոցը» հիմնվում էր շվեդական հաջողված փորձի վրա՝ համապատասխանեցնելով այն տեղական մշակույթին ու նորմերին: Մոդելը ինստիտուցիոնալացվել է Հանրային նախաձեռնությունների կենտրոնի (ՀՆԿ) կողմից: Մոդելի նպատակն է մեծացնել հայրերի դերն ու պատասխանատվությունը երեխաների կյանքում, ինչպես նաև կոտրել ընտանիքում ու հասարակությունում գենդերային դերերով պայմանավորված վարքագծային կարծրատիպերը:

ԾՐԱԳԻՐԸ

«Հայրերի դպրոց» ծրագրի վարողները պետք է բավարարեն հետևյալ երեք պահանջները ունենան երեխա, ունենան հայրության դրական փորձառություն և վերապատրաստվեն՝ որպես հայրերի դպրոցի վարողներ: Նրանք ավելի շատ դիտարկվում են որպես ուսուցիչ, քան վարող: Ակնկալվում է, որ նրանք պիտի ծանոթ լինեն հանրային առողջապահության գործող օրենսդրությանը, Կոսովոյի սոցիալ-ժողովրդագրական բնութագրին, ինչպես նաև այն միջազգային կոնվենցիաներին ու համաձայնագրերին, որոնք արտացոլված են «Հայրերի դպրոցի» մոտեցումներում: Այդ կոնվենցիաներից են ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան և ԱՀԿ Երեխայի առողջության ու զարգացման եվրոպական ռազմավարությունը: Ծրագրի շահառուներն են մեկ տարեկանից փոքր երեխա ունեցող տղամարդիկ և ընտանիքում երեխայի սպասող տղամարդիկ, որոնք ապրում են Կոսովոյում կամ շրջակայքում: Խմբերը միջինում բաղկացած են 5-ից 15 մասնակիցներից: «Հայրերի դպրոցի» հանդիպումները տեղի են ունենում շաբաթը մեկ անգամ՝ մոտ 1,5 ժամ տևողությամբ: Ընդհանուր ծրագրի ընթացքը կազմված է ութ հանդիպումներից, որոնց ավարտին մասնակիցները «Հայրերի դպրոցի» վկայագիր են ստանում:

«Հայրերի դպրոցի» հանդիպումների թեմաներն են՝

- Հայրերի դերը հղիության ժամանակ,
- Ծնունդաբերության մասին միֆեր, ծնունդաբերությանը մասնակցելը,
- Կրծքով կերակրումը, մոր հետծնունդաբերական դեպրեսիան, սեռական կյանքը,
- Երեխայի զարգացումը,
- Օրենքն ու առօրյա կյանքը,
- Գենդերի հասկացության և գենդերային հավասարության հիմնադրույթներ,
- Ժողովրդավար ու տոտալիտար ընտանիքները,
- Տղամարդկանց ֆիզիկական ու հոգեկան առողջությունը,
- Վստահություն երեխայիդ ապագայի հանդեպ:

ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ծրագիրն իրականացվել ու մշտադիտարկվել է Հանրային նախաձեռնությունների կենտրոնի կողմից:

18. Mats Berggren, Nikolay Eremin, Stanislav Kazansky, Vladimir Martsenyuk, Vladimir Motygin, and Andrey Turovets. (2010) Father School Step by Step. UNICEF, Moscow

«ՄԻԵՍՍԱԿԻՏ» (MIESSAKIT)[19]

Վայրը՝ Ֆինլանդիա

ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

«Միեսսակիտը» կամ Տղամարդկանց ասոցիացիաների ընկերակցությունը շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որի նպատակն է աջակցել տղամարդանց հոգեկան, հոգեբանական ու սոցիալական զարգացմանը, նպաստել առողջ ընտանեկան կյանքին և ամրապնդել գենդերային հավասարությունը: Ընկերակցության հիմնական ֆինանսավորողը ֆիննական «Սլոթ Մըշին» (Slot Machine) ասոցիացիան է, և նրանք գործում են Ֆինլանդիայի 15 բնակավայրերում: «Միեսսակիտը» համայնքային նախածննդյան դասերի հետ կապված աջակցություն է տրամադրում հայրերին՝ նրանց ներգրավելով հավասարակիցների խմբերում:

ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ

Ծրագրի շրջանակներում վերապատրաստվեցին Հայրիկների խմբերի ղեկավարները: Վերապատրաստման մեկ օրը վերաբերում է վերապատրաստման թեմաներին, իսկ երկուսից չորս օր հատկացվեց խմբային վերապատրաստման հիմնադրույթներին ու խմբային դինամիկային: Վարողները նույնպես վերապատրաստվեցին սոցիալական դեպքի վարման թեմայով: Ծրագրի պահանջներից էր տղամարդ վարողներ ունենալը: Ծրագրում նաև պարտադիր էր, որ վարողները չսպառնան կամ բարոյականության քարոզ չանեն հայրերին, այլ ապահովեն դրական միջավայր: Մասնակիցները ընտանիքում երեխայի սպասող և առաջնեկ ունեցող հայրեր են, որոնց ծրագրում ներգրավել են առողջապահական կենտրոններում: Հայրիկների խմբերը հանդիպումները տեղի էին ունենում առողջապահական կենտրոններում: Դասերը կազմված էին հինգ հանդիպումներից երկուսը՝ նախքան երեխայի ծնունդը, իսկ երեքը՝ ծննդից հետո:

Հանդիպումների թեմաները մշակվել են հայրերի հետ աշխատանքի ու տարածաշրջանային քննարկման ժամանակ՝ տարածաշրջաններին հատուկ խնդիրները զատորոշելու նպատակով:

ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ծրագրի շրջանակներում աշխատանքային սուպերվիզիա է իրականացվում վարողների համար, ինչպես նաև տարածաշրջանային մակարդակի քննարկումներ այն առողջապահական կենտրոնների համար, որոնք ցանկանում են Հայրիկների խմբեր գործարկել իրենց նախածննդյան խնամքի ծառայությունների շրջանակում:

19. Jouni Varanka and Maria Forslund, eds. (2006). Possibilities and Challenges? Men's Reconciliation of Work and Family Life - Conference Report.

ՄԻՆՍԿԻ ՇՐՋԱՆԻ ՆՈՐ ՀԱՅՐԵՐԻ ԴՊՐՈՑ[20]

Վայրը՝ Բելառուս

ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

Մինսկի «Նոր հայրերի դպրոց» ծրագիրը ստեղծվել է 2009 թվականին՝ 2008-2010 թթ Գենդերային հավասարության խթանման գործողությունների ազգային ծրագրի շրջանակում՝ նպատակ ունենալով հայրերի դերերի ու ներուժի խթանման միջոցով ամրապնդել ընտանիքը՝ որպես հանրային ինստիտուտ: Այս ծրագիրը հիմնվել է շվեդական «Իսկական հայրիկ» մոդելի վրա: Ծրագիրն իրականացվել է Մինսկի «Ընտանիքի և երեխաների սոցիալական ծառայություն» պետական գործակալության քաղաքային կենտրոնի մասնագետների և Մինսկի Բնակչության սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների կողմից:

ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ

Վարողներ ընտրվեցին այն տղամարդկանցից, որոնք կամ փորձառություն ունեին կամ վերապատրաստվել էին երեխայի զարգացման ու դաստիրակության ուղղությամբ: Նրանց վերապատրաստել է Մինսկի Սոցիալական ծառայության քաղաքային կենտրոնը: Ծրագրի շահառուներն էին ընտանիքում առաջին երեխային սպասող կամ արդեն հայր դարձած տղամարդիկ: Դասերն անցկացվում էին մայրական բարեկեցության կենտրոնների ու մանկական ամբուլատոր հաստատությունների հետ համագործակցությամբ: Ծրագրի համընդհանուր կարգախոսն էր՝ «Այսօրվա հայրերից ապագա հայրերին»:

ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ծրագրի արդյունքները դիտարկվել են Մինսկի Սոցիալական ծառայության քաղաքային խորհրդի և Մինսկի Սոցիալական ծառայության մեթոդաբանական ասոցիացիայի հանդիպումներում, ինչպես նաև մասնակցային հայրության կոնցեպտի մասին սեմինարների ու համաժողովների ժամանակ:

20. Mats Berggren, Nikolay Eremin, Stanislav Kazansky, Vladimir Martsenyuk, Vladimir Motygin, and Andrey Turovets. (2010) Father School Step by Step. UNICEF, Moscow

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՈՒՂԻ[21]

Վայրը՝ Ռուսաստան

ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

Ռուսաստանում առաջին «Հայրերի դպրոցը» հիմնվել է 2008 թ. Սանկտ Պետերբուրգ քաղաքում: «Հայրերի դպրոցը» հիմնած անձինք 2010 թվականին բացեցին «Հյուսիսային ուղի» անունով հասարակական կազմակերպություն, որը պետք է ողջ Ռուսատանի տարածքում անցկացներ «Հայրերի դպրոց» բազային դասընթացը: Ծրագրի աջակիցներն էին Սանկտ Պետերբուրգի Սոցիալական ու տնտեսական ինստիտուտը, «Տղամարդիկ 21» ինքնավար հասարակական կազմակերպությունը, իսկ ֆինանսավորումն իրականացնում էին Սանկտ Պետերբուրգի Աշխատանքի ու սոցիալական քաղաքականության հանձնաժողովն ու Շվեդիայի միջազգային զարգացման գործակալությունը:

ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ

Ծրագրի համակարգումն իրականացնում են չվճարվող կամավորները, որոնք կենտրոնացված վերապատրաստում չեն անցնում, այլ կանոնավոր կերպով հանդիպում են փորձի փոխանակման ու սովորելու նպատակով: Սովորաբար տղամարդկանց ներգրավում են ծրագրում նրանց կանանց կամ զուգընկերների միջոցով, որոնք տեղեկանում են ծրագրի մասին մայրական խնամքի բաժինների միջոցով: Ծրագրի շահառուներն էին ընտանիքում երեխայի սպասող հայրերը: Ծրագիրը զարգացավ բնականոն ընթացքով, սակայն սկզբում ծրագրի հանդիպումներն իրականացվում էին Սանկտ Պետերբուրգում գտնվող հանրային կառավարման տարբեր կենտրոններում:

- «Հայրերի դպրոց» ծրագրի հանդիպումները հետևյալ թեմաներով էին.
- Սոցիալական բարեկեցություն և նպաստներ,
- Մանկան առողջություն,
- Դաշտային այցեր. սոցիալական ապահովության կենտրոն և ծննդատներ:

ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ծրագիրն իրականացվել ու մշտադիտարկվել է «Sprangbradan և AB Bonnie Communications» շվեդական խորհրդատվական ընկերությունների կողմից: «Հյուսիսային ուղի» կազմակերպության միջոցառումները, ըստ տպավորությունների, ազդեցություն էին ունեցել տեղական քաղաքականությունների վրա: 2012 թվականից ի վեր Սանկտ Պետերբուրգի ընտանեկան օրենսգիրքը սահմանում է, որ քաղաքի յուրաքանչյուր թաղամաս պետք է Հայրիկների դպրոց ունենա:

21. Տեղեկությունը հասանելի է՝ www.svrp.ru and Mats Berggren, Nikolay Eremin, Stanislav Kazansky, Vladimir Martsenyuk, Vladimir Motygin, and Andrey Turovets. (2010) Father School Step by Step. UNICEF, Moscow. and Fábián, K., & Korolczuk, E. (Eds.). (2017). Rebellious Parents: Parental Movements in Central-Eastern Europe and Russia. Indiana University Press. and Åberg, P. (2014). Promoting Active Fathers: The Birth and Development of a Civic Initiative in Contemporary Northwestern Russia.

ՌԵՖՈՐՄ[22]

Վայրը՝ Նորվեգիա

ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

«Հայրիկների խումբ» ծրագիրը մեկնարկել է Օսլոյում Ընտանիքի ու երեխաների հարցերի նախարարության աջակցությամբ և իրականացվել է հոգեբան Պեռ Արե Լոկեի ղեկավարությամբ, որը նաև հայտնի «Հայրերի հեղափոխություն» գրքի հեղինակն է: Գիրքը պատմում է արդի հայրության, առնականության ու գենդերային հարաբերությունների մասին:

ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ

Ծրագրում ներգրավվեցին Հանրային առողջապահական կենտրոնից երկու տղամարդ վարողներ, որոնք պետք է վարեին «Հայրերի խումբը»՝ շեշտադրելով աջակցության ու հզորացման հասկացությունները: Ծրագրում կարևորվում էր հենց տղամարդ վարողներ ունենալու փաստը, որն իսկապես խնդիր էր՝ հաշվի առնելով այն, որ շատ քիչ թվով տղամարդիկ են աշխատում հանրային առողջապահական կենտրոններում: Կենտրոններից ընտրվեցին ընտանիքում երեխա սպասող կամ նորաթուխ հայրիկներ: Մի «Հայրերի խումբն» աշխատում էր հետծննդյան դեպրեսիայից տառապող զուգընկերներ ունեցող հայրերի հետ: 14 շաբաթ շարունակ՝ մոտ յոթ անգամ խումբը հանդիպումներ անցկացրեց հանրային առողջապահական կենտրոնում: Հայրերի խմբերը բավականին միատարր էին. բոլոր մասնակիցները նորվեգացի էին և հարաբերությունների մեջ էին մայրիկների հետ: Այդուհանդերձ, նրանք բախվեցին մի շարք խնդիրների՝ թե փոքր, և թե լուրջ խնդիրների:

Հայրերի խմբային հանդիպումները անդրադառնում էին հետևյալ թեմաներին.

- Կրկնակի խնամք կատարողի դերը,
- Ծայրահեղ վիճակում գտնվելը,
- Ձայրույթ և հիասթափություն,
- Աշխատանքի ու ընտանիքի հավասարակշռումը,
- Ինչպես վարվել ճիշտ,
- Փորձի փոխանակում,
- Մարդիկ և իրենց էությունը:

ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Խումբը դժվարացավ չափել Հայրերի խմբերի աշխատանքի արդյունքները:

22. Jouni Varanka and Maria Forslund, eds. (2006). Possibilities and Challenges? Men's Reconciliation of Work and Family Life - Conference Report.

ՄԻՇՏ ՀԱՅՐԻԿ (SIEMPRE PAPA)[23]

Վայրը՝ Միացյալ Նահանգներ

ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

«Միշտ հայրիկ» կամ «24/7 հայրիկ» կրթական ծրագիրը մշակել է ԱՄՆ Հայրության ազգային ինստիտուտը՝ նպատակ ունենալով խթանել մասնակցային ու խնամք ցուցաբերող հայրությունը, ինչպես նաև բարելավել կին զուգընկերների հետ լարված հարաբերությունները: Կրթական ծրագիրը համապատասխանեցվել է ողջ ԱՄՆ-ում կիրառման համար:

ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ

Ծրագիրն իրականացվել է Մերիլենդ նահանգի Մոնթգոմերի շրջանի լատինական ծագումով հայրերին ծառայող համայնքային կազմակերպության անձնակազմի կողմից: Վարող դառնալու համար չկար կրթական նվազագույն ցենզի պահանջ: Չնայած դրան, վարողներին խրախուսում էին մասնակցել ծրագրի վերապատրաստումներին: Կրթական ծրագիրը հենց հարմարեցված էր բանտում լատինական ծագմամբ գտնվող հայրերի համար: Յուրաքանչյուր խմբում կային 6-8 հայրեր: Բազմաթիվ մասնակիցներ գաղթել են Կենտրոնական Ամերիկայի երկրներից: Ծրագիրը նախատեսված էր իրականացնել երկու տարբերակով՝ առավոտյան ու երեկոյան: Առավոտյան հանդիպումները կենտրոնանում էին պարզ տեղեկատվության տրամադրման շուրջ, իսկ երեկոյան հանդիպումների ժամանակ վարողները որոշ թեմաներ ու աշխատանքներ առավել խորությամբ էին քննարկում ու իրականացնում: Երկու տարբերակի դեպքում էլ 12 երկժամյա հանդիպումներ էին պլանավորված: Հանդիպումներն անցկացվում էին այն ուղղիչ-աշխատանքային հաստատությունում, որտեղ գտնվում էին հայրերը:

Հայրերի դպրոցն անդրադառնում էր հետևյալ թեմաներին.

- Ընտանիքի պատմություն,
- Ի՞նչ է նշանակում՝ լինել տղամարդ,
- Զգացմունքները ցույց տալն ու դրանք կառավարելը,
- Տղամարդու առողջությունը,
- Հաղորդակցություն,
- Հայրիկի դերը,
- Կարգապահություն,
- Երեխայի աճն ու զարգացումը,
- Մասնակից դառնալը,
- Մայրիկի հետ աշխատելն ու միասին ծնողի դերը տանելը,
- Հայրիկներն ու աշխատանքը:

23. F., Burgess, A., Kato, J. & Barker, G., (2012). Fatherhood: Parenting Programmes and Policy - a Critical Review of Best Practice. London/Washington D.C.: Fatherhood Institute/ Promundo/MenCare

24. Identity's Responsible Fatherhood Program: Preliminary Results 9/06-1/11. Identity. http://store.fatherhood. org/c-92-program-esearchevaluation.aspx

ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

«Միշտ հայրիկ» ծրագիրը գնահատվել է[24] 2006-2011 թթ. ընթացքում՝ ծրագրի ելքային ու ավարտական տվյալների հավաքագրման ու վերլուծության միջոցով: Համաձայն արդյունքների՝ մասնակիցների 47%-ը բարելավել էր իր ծնողավարման հմտությունները: Առավել մեծ ազգային ծրագրի գնահատումների արդյունքների համաձայն՝ հայրերի հաղորդակցման հմտությունները բարելավվել են, ինչպես նաև արձանագրվել են դրական փոփոխություններ ծնողավարման ու գենդերային դերերի հանդեպ նրանց վերաբերմունքում:

ՄԱԿ-ի ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ (UNICEF) ՀԱՅՐԻԿՆԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԸ[25]

Վայրը՝ Ուկրաինա

ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

2004 թ. ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը և «IKEA» հիմնադրամը Չեռնոբիլի աղետից տուժած բնակավայրերում միասին ստեղծեցին առողջապահական կենտրոններ երեխաների ու կանանց համար ՝ նպատակ ունենալով հասցեագրել երեխաների առողջական խնդիրները: 2007 թ.-ից սկսած՝ առողջապահական կենտրոնները սկսեցին հյուրընկալել Հայրիկների դպրոցներին այսօրվա դրությամբ դրանք արդեն գործում են Ուկրաինայի 10 շրջաններում, որոնք հատկապես խոցելի են առողջապահական ու ընտանեկան ծառայությունների հասանելիության տեսանկյունից:

ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ

Ծրագրի պահանջներից էր ունենալ այնպիսի տղամարդ վարողներ, որոնք պետք է ունեցած լինեին դրական հայրության փորձ: Այդուհանդերձ, հայրերի համար դրված չէր որոշակի կրթական ցենզ ունենալու պահանջը՝ վարող դառնալու համար: Մասնակիցներն ընտանիքում երեխա սպասող տղամարդիկ էին: Հայրիկների դպրոցների մասնակիցները հանդիպում էին երկու ժամով՝ վեցից յոթ անգամ նախքան երեխայի ծնունդը, և մեկ-երկու անգամ՝ երեխայի ծննդից հետո:

«Հայրիկների դպրոցի» թեմաներն են.

- Նախածննդյան ժամանակահատված,
- Ծննդաբերության ընթացք,
- Հետծննդյան ժամանակահատված,
- Երեխայի ծննդյանն առնչվող իրավական հարցեր,
- Գենդերի ու գենդերային հավասարության հիմնադրույթներ,
- Տոտալիտար ընտանիքը՝ որպես ընտանեկան բռնության աղբյուր:

ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ծրագիրը գնահատելիս[26] ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը նշանակալից արդյունքներ արձանագրեց: Մի բնակավայրում երեխայի ծննդյան ժամանակ տղամարդկանց ներկայությունը 4%-ից աճել է մինչև 75%, իսկ Ժիտոմիրի շրջանում այս թիվը հասել է 80%-ի: Իվանո-Ֆանկովսկի շրջանի մի հիվանդանոց հաստատել էր, որ մանկական մահացությունը նվազել է 15%-ով, երեխային բացառապես կրծքով կերակրման միտումն աճել է 10%-ով, ինչպես նաև մանկական սակավարյունության կրճատում է տեղի ունեցել 69%-ով: Հետծննդաբերական բարդությունները ծրագրի շահառուների շրջանում նվազել են 48%-ով, իսկ մանկական սթրեսի մակարդակը՝ 58%-ով:

25. McAllister, F., Burgess, A., Kato, J. & Barker, G., (2012). Fatherhood: Parenting Programmes and Policy - a Critical Review of Best Practice. London/Washington D.C.: Fatherhood Institute/ Promundo/MenCare

26. Ihttps://www.unicef.org/evaldatabase/files/2010_Ukaraine_-_Evaluation_report_2010-002.pdf

ԴԵՊՔԵՐԻ ՆԿԱՐԱԳՐԵՐ

ԴԵՊՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ. ՀԱՅՐԵՐԻ ՇԱՐԺԱԿԱՆ ԴՊՐՈՑ[27]

2009 թ.-ին Բելառուսի Պատասխանատու հայրության շարժումը մի նախաձեռնություն փորձարկեց՝ Մինսկից դուրս Շարժումն ընդլայնելու նպատակով, որպեսզի ընտանիքում երեխա սպասող հայրերի կողմից ռեսուրսների ու տեղեկատվության մեծացող պահանջը բավարարվի: Բելառուսում պետական առողջապահական համակարգը թույլ է տալիս առողջապահական աշխատակիցներին հանդիպումներ անել բժիշկների ու ընտանիքում երեխա սպասող հայրերի միջև: Այս հանդիպումներից հետո բժիշկները նրանց կարող են վկայագիր տալ, որով նրանք կստանան երեխայի նպաստ:

ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Բազմաթիվ փոքր քաղաքներ ու գյուղեր էին ցանկանում նպաստել հայրության խթանման ծրագրերին, սակայն Բնակչության սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների անձնակազմից հավաքագրված վարողներ դժվար էր գտնել, քանի որ անձնակազմը հիմնականում կանանցից է կազմված, իսկ ծրագրի պահանջն է ունենալ տղամարդ վարողներ: Շրջանի ու տարածքային կենտրոնների միջև հեռավորությունը երբեմն գերազանցում է 350 կմ-ը, ինչն էլ շատ հայրերի համար դժվարացնում է կենտրոններ գալը:

ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

«Հայրերի դպրոց» մոբիլ ծրագրում ձևավորվում են մոբիլ աջակից խմբեր, որոնցում ներգրավված են փորձառու վարողներ Մինսկից: «Հայրերի դպրոց» մոբիլ ծրագիրը համագործակցում էր տեղական մարմինների հետ՝ նոր հնարավոր վարողներ ներգրավելու նպատակով, կամ ընտանիքում երեխայի սպասող հայրերի հետ նախնական սեմինար վարելու համար, կամ՝ ստանդարտ ծրագրի հիման վրա տեղում «Հայրերի դպրոց» բացելու ուղղությամբ սեմինար անցկացնելու համար:

«Հայրերի դպրոց» մոբիլ ծրագիրը հանդիպումներ է անցկացրել Գոմելում, Գռոդնոյում, Մոլոդեչնոյում, Ձերժինսկում, Ֆանիպոլում, Ստոլինում, Սլոնիմում, Վիտեբսկում, Մոգիլյովում, Բրեստում, Բորիսովում, Բոռբռուիսկում, Լիդայում, Ռեքիցայում, Մայինա Գորկայում և այլ վայրերում: Յուրաքանչյուր քաղաքում մի տարածքային կենտրոն հետաքրքված էր երիտասարդ ընտանիքների ու երեխայի սպասող ծնողների հետ աշխատանքի կազմակերպման ու իրականացման հարցում: Այս կենտրոններն աջակցում էին «Հայրերի դպրոց» մոբիլ ծրագրի աշխատանքին: Հենց որ մոբիլ թիմը ձեռք բերեց նախնական կապեր ու ստեղծեց հարաբերություններ, հետագա վերապատրաստումը և ուսուցումն արդեն կարելի էր իրականացնել տեխնոլոգիայի օգնությամբ, ներառյալ վիրտուալ հեռավար համաժողովներն ու առցանց հանդիպման գործիքները:

---

27. Mats Berggren, Nikolay Eremin, Stanislav Kazansky, Vladimir Martsenyuk, Vladimir Motygin, and Andrey Turovets. (2010) Father School Step by Step. UNICEF, Moscow.

ԴԵՊՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ. ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ՀԱՅՐՈՒԹՅՈՒՆ[28]

1999 թ.-ին Մինեսոտայի Մինեապոլիս քաղաքի «Համայնքային և ընտանեկան վերականգնողական շրջանակներ» ծրագիրը վերականգնողական ծնողավարման վերաբերյալ մի նախաձեռնություն սկսեց բռնություն կիրառող հայրերի հետ, որպեսզի նրանք ձեռնարկեն անվտանգ միջոցներ սեփական երեխաների հետ հարաբերությունները վերականգնելու ուղղությամբ: Ծրագիրը հայրերի խմբերի միջոցով օգնում էր հենց հայրերին պատասխանատվություն ստանձնել սեփական բռնի գործողությունների և ընտանիքի վրա բացասական հետևանքների համար, ինչպես նաև ապրումակցել սեփական երեխաներին: Չնայած ծրագիրն այժմ ավարտվել է, քաղած դասերն ու աշխատանքի սկզբունքները ներառվել են Մինեապոլիսի Ընտանեկան բռնության ծրագրի տղամարդկանց ծնողավարման այլ նախագծերում:

ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

«Համայնքային և ընտանեկան վերականգնողական շրջանակներ» ծրագրի անձնակազմը, աշխատելով բռնությանը միջամտող ծրագրում, հասկացան, որ տղամարդիկ անկեղծորեն ցանկանում էին խոսել իրենց երեխաների ու նրանց վրա ընտանեկան բռնության ազդեցության մասին: Ծրագրում ներգրավված տղամարդիկ ուզում էին հասկանալ, թե ինչ գործնական քայլեր կարող են ձեռնարկել իրենց ծնողավարման հմտությունների բարելավման ու երեխաների հետ հարաբերությունների վերափոխման ուղղությամբ, սակայն չգիտեին՝ որտեղից ու ինչպես սկսել:

ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

«Վերականգնողական ծնողավարում» ծրագիրը մեկնարկել էր՝ հիմք ընդունելով հենց վերականգնողական արդարադատության սկզբունքները: Այն կենտրոնանում է երկու առաջնահերթությունների վրա.

1. Անվտանգության ապահովում ընտանիքի բոլոր անդամների համար.
2. Բռնի վարքագծի դրսորման համար հայրերի պատասխանատվության մեծացում:

Ծրագիրը հիմնվում է այն պնդման վրա, որ եթե ընտանիքում սթրեսային իրավիճակ է լինում, այն փչացնում է ծնողների ու երեխաների միջև հարաբերությունները, և հենց ծնողի պարտականությունն է սկսել հարաբերությունների վերականգնման գործընթացը: Սա չի նշանակում, որ հարաբերությունները «կվերականգնվեն». ծրագիրն օգնում է տղամարդկանց իրատեսական կերպով պատկերացնել, թե ինչ կարող են ակնկալել երեխաներից, ինչպես նաև գիտակցել, որ իրենց նախկին արարքները չեն ջնջվի կամ մոռացվի: Այդուհանդերձ, դա նրանց թույլ է տալիս նախապատրաստվել հետագայում իրենց երեխաների հետ պատասխանատու շփումների ձևավորմանը:

Վերականգնողական ծնողավարման խմբերն անդրադառնում են վեց էական բաղադրիչների, որոնք դրանք դարձնում են առանձնահատուկ՝ որպես հայրերի վերապատրաստման մոդել: Դրանք են՝

28. Mathews, D. J. (2004). Restorative parenting: A strategy for working with men who batter and are fathers. Available at: http://menengage. org/wpcontent/uploads/2014/06/Restorative_parenting. pdf.

- Վերականգնողական ծնողավարման սկզբունքներ. ծնողները պատասխանատվություն են կրում իրենց ընտանիքի առաջ և պետք է հոգ տանեն իրենց ու երեխաների համար: Երեխաներն են վճռում վերականգնման գործընթացի տեմպը: Անհատներն ունեն ընտրություն և պատասխանատու են իրենց վարքագծի համար:
- Պրակտիկ մասնագետների թեզեր. բոլոր ծնողներն ունեն ուժեղ կողմեր ու անառողջ վարքագիծը փոխելու կարողություն: Ծնողները լավագույնն են ցանկանում իրենց երեխաների համար: Ընտանեկան բռնությունը բացասաբար է անդրադառնում երեխաների՝ իրենց ծնողների ընկալման վրա, իսկ երեխաներն ու ծնողները երկուստեք չպետք է մոռանան անցյալում կատարվածը:
- Պայմանագիր. ծնողի ու երեխայի պարտադիր կատարման ենթակա պայմանագիր, որում ներառված են 30 հանձնառություն երեխայի հանդեպ, այդ թվում՝ «Ես քեզ զերծ կպահեմ բոլոր վնասներից» և «Ես կհարգեմ քո որոշումներն ու կարծիքները»:
- Ապրումակցման ձևավորում. տղամարդիկ պետք է հասկանան, թե իրենց կիրառած բռնությունն ինչպես է ազդում երեխաների վրա:
- Հարաբերությունների վերականգնման գործընթացի պլանավորում. հատուկ մշակված վարժություններ, որոնք կատարում են հայրերը, այդ թվում հաղորդակցություն, ինքնաճանաչողություն, լսելու հմտության զարգացում, գործողություն, ամփոփում, գնահատում և սովորածի ինտեգրում ապագա գործելակերպում:
- Ինքնախնամք. ինքնակառավարում, երբ բռնի վարքագիծ դրսևորելու ցանկությունը մեծանում է, կամ երբ իրավիճակը կարող է հանգեցնել բռնություն կիրառելու մտքերի: Առողջ երկընտրանքի ձևավորում, որպեսզի բարդ իրավիճակները չհանգեցնեն բռնության: Նախկինում բռնության հանգեցրած որոշումների առավել լավ գիտակցում:

Այս մոտեցումն առանցքային միջամտության փուլ է բռնություն կիրառած տղամարդկանց համար հոգ տանելու գործընթացում:

This programme is funded by the European Union

TOGETHER AGAINST
GENDER STEREOTYPES AND GENDER-BASED VIOLENCE
#eu4genderequality